«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
«НАУЧНЫЙ ЦЕНТР ЭКСПЕРТИЗЫ ЛЕКАРСТВ И МЕДИЦИНСКИХ ТЕХНОЛОГИЙ ИМЕНИ АКАДЕМИКА ЭМИЛЯ ГАБРИЕЛЯНА» АОЗТ
«SCIENTIFIC CENTRE OF DRUG AND MEDICAL TECHNOLOGY EXPERTISE AFTER ACADEMICIAN EMIL GABRIELYAN» CJSC

Կոմիտաս պող. 49/4, Երևան 0051, Հայաստան
пр. Комитаса 49/4, Ереван 0051, Армения
49/4 Komitas aven., Yerevan 0051, Armenia

Հեռ. (+374 10) 23-16-82, 23-08-96, 23-47-32, 23-20-91
Tel.: (+374 10) 23-16-82, 23-08-96, 23-47-32, 23-20-91
Fax: (+374 10) 23-29-42, 23-21-18
E-mail: admin@pharm.am ; URL: http://www.pharm.am

01012364/5
29.12.15

Հարգելի գործընկերներ,

Տեղեկացնում ենք, որ 2016թ-ի հունվարի 8-ից սկսած դեղերի գրանցման փորձաքննության նպատակով Կենտրոն ներկայացվող գրանցման փաստաթղթերի փաթեթները՝ դոսյեները, նմուշները եւ ստանդարտները պետք է ներկայացվեն հանձնման-ընդունման ակտերով (կցված են): Ակտերում հաշվի են առնված ձեր բոլոր առաջարկությունները: Դրանցից բացի այլ ձեւի եւ բովանդակության փաստաթղթեր չեն ընդունվելու:

Ակտերը ներկայացվում են գրանցման հավաստագրի իրավատիրոջ կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից, 2 օրինակից, նախապես լրացված՝ տպագիր, ստորագրված ու կնքված: Կենտրոնի 1-ին հարկի ընդունարանի աշխատակիցը հանձնման-ընդունման գործընթացն ավարտելուն պես (իրականացնում է փաստացի ստուգում, համապատասխանության դեպքում ստորագրում եւ կնքում է ակտը) ձեզ կվերադարձնի ակտի մեկ օրինակը:

Ակտերի լրացման ժամանակ անհրաժեշտ է հետեւել ձեւաթղթի բացատրական նշումներին:

Գրանցման նպատակով փորձաքննության տեւողության ձգձգումից խուսափելու համար անհրաժեշտ է ներկայացման պահին ուշադրություն դարձնել նմուշների եւ ստանդարտների մնացորդային ժամկետներին:

Հարգանքով՝ Հակոբ Թոփչյան